# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Այ-Սոլուշն ՍՊԸ-ն ԵԲԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/78 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 7 | - | - | - | - | Ապրանքի անվանում՝ Գծային անաստոմոզի մեխանիկական արտիկուլյացիոն կտրող-կարող գործիք (մեկանգամյա օգտագործման)։Գործիքը պետք է նախատեսված լինի էնդոսկոպիկ վիրաբուժության ընթացքում հյուսվածքների կտրելու և միաժամանակ գծային մեխանիկական կար ձևավորելու համար՝ ապահովելով բարձր ճշգրտություն, հեմոստազ և անվտանգ անաստոմոզ։ Մատակարարվող գործիքը պետք է ունենա առնվազն 360° պտտման |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հնարավորություն, իսկ աշխատանքային մասը պետք է ապահովի առնվազն 60° արտիկուլյացիա յուրաքանչյուր ուղղությամբ (ընդհանուր՝ մինչև 120° երկկողմանի թեքում)։ Գործիքը պետք է ունենա ներկառուցված կտրող դանակ և ապահովի գծային կարի երկարություն՝ ոչ պակաս, քան 46 մմ և 60 մմ ։ Այն պետք է համատեղելի լինի 12 մմ տրամագծով տրոկարների հետ։Գործիքը պետք է կազմված լինի հիմնական սարքից և փոխարինվող քարթրիջից։ Այն պետք է ապահովի անվտանգ արտիկուլյացիա, հյուսվածքի սեղմում, կտրում և գծային մեխանիկական կարի ձևավորում։Տիտանե ստեպլերային ամրակները պետք է պատրաստված լինեն մաքուր տիտանից, որը նախատեսված է վիրաբուժական իմպլանտների համար, իսկ բրանշները, ցողունը և կտրող դանակը՝ բժշկական նշանակության չժանգոտվող պողպատից։Գործիքը պետք է մատակարարվի ըստ անհրաժեշտության հետևյալ տարբերակներով՝ ձողի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | երկարությունը՝ 280 մմ, 340 մմ կամ 440 մմ, իսկ կարի երկարությունը՝ 46 մմ կամ 60 մմ:Քարթրիջներից յուրաքանչյուրը պետք է ապահովի հյուսվածքի կտրվածք և առնվազն 6 շարք տիտանե ստեպլերային ամրակների տեղադրում։ Համակարգը պետք է ունենա ինչպես հավասարաչափ դասավորված ամրակներով քարթրիջներ (կտրվածքի յուրաքանչյուր կողմում՝ 3-ական շարք), այնպես էլ անհավասարաչափ դասավորված ամրակներով քարթրիջներ (օրգանի պահպանվող հատվածում՝ 4 շարք, հեռացվող հատվածում ՝ 2 շարք կամ համարժեք տեխնոլոգիական լուծում), ինչը հնարավորություն կտա վիրաբույժին կատարել օպտիմալ ընտրություն տարբեր անատոմիական իրավիճակներում և տարբեր հաստության հյուսվածքների դեպքում:46 մմ կարի համար նախատեսված քարթրիջների տարբերակները պետք է լինեն՝2.0 մմ (փակված՝ 0.75 մմ),2.5 մմ (փակված՝ 1.0 մմ ),3.5 մմ (փակված՝ 1.5 մմ),3.8 մմ (փակված՝ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 1.8 մմ),4.1 մմ (փակված` 2.0 մմ):60 մմ կարի համար նախատեսված քարթրիջների տարբերակները պետք է լինեն`2.0 մմ (փակված` 0.75 մմ),2.5 մմ (փակված` 1.0 մմ),3.5 մմ (փակված` 1.5 մմ),3.8 մմ (փակված` 1.8 մմ),4.1 մմ (փակված` 2.0 մմ),4.4 մմ (փակված` 2.3 մմ ):Գործիքը պետք է ունենա անվտանգ գործարկման, հյուսվածքի սեղմման և մեխանիկական կարի ձևավորման մեխանիզմներ:Մատակարարման պայմանների համաձայն` յուրաքանչյուր 15 հատ քարթրիջի հաշվով պետք է տրամադրվի 1 հատ համատեղելի գծային անաստոմոզի արտիկուլյացիոն կտրող-կարող գործիք: Բոլոր բաղադրիչները պետք է լինեն նույն արտադրողի կողմից վավերացված և լիովին համատեղելի` ապահովելով համակարգի անվտանգ և արդյունավետ կիրառումը:Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, մեկանգամյա օգտագործման, առանձին գործարանային ստերիլ փաթեթավորմամբ և անմիջապես կիրառման համար պիտանի:Մատակարարը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պարտավոր է ներկայացնել՝ Արտադրող ընկերության կողմից տրված ավտորիզացիոն նամակ:Արտադրանքի համապատասխան CE, FDA կամ համարժեք որակի և համապատասխանության հավաստագրեր: |

## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Ай-Солюшн в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵԲԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/78 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 7 | | | | | |